ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐԶԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիս, 2024 թվականի № 47-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԵՎ ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՌԱՐԶԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՂՈՐԴԱՑԱՆՑԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գործադիր տնօրենի կողմից 2024 թվականի հունիսի 20-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված թիվ ԱՀ-03/439/24 գրությունը և հաշվի առնելով Ընկերության կողմից հեռարձակման ենթակա տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2024 թվականի հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:
2. Հաստատել Ընկերության «Միջազգային ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2024 թվականի հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածի:
3. Հաստատել Ընկերության «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրի՝ 2024 թվականի հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի:
4. Հաստատել Ընկերության «Առաջին ալիք Ամերիկա» տեսալսողական ծրագրի՝ 2024 թվականի հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 4 հավելվածի:
5. Սահմանել, որ սույն որոշմամբ նախատեսված ժամանակահատվածում Ընկերությունն իրավասու է ուղիղ եթերով հեռարձակել կարևոր իրադարձությունների վերաբերյալ՝ սույն որոշմամբ հաստատված հաղորդացանցերով չնախատեսված տեսալսողական հաղորդումներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐԶԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ
27 հունիս, 2024 թվականի
ք. Երևան